

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Աշխարհագրություն

Թեմա՝ Գործնական աշխատանքի անցկացման ձևերն ու մեթոդները

Վերապատրաստող՝ Նելլի Քարամյան

Կատարող՝ Միրա Արզումանյան

## Բովանդակություն

1. Ներածություն.....	3
2. Գործնական աշխատանքները որպես ուսուցման կազմակերպման ձև.....	5
3. Գործնական աշխատանքի ձևերն ու տեսակները.....	6
4. Եզրակացություն.....	15
5. Օգտագործված գրականություն.....	16

## Ներածություն

Գործնական մեթոդները մեծ դեր են խաղում այնպիսի կարողությունների ձևավորման գործում, որոնք անհրաժեշտ են սովորողի ինքնուրույն իմացական գործունեության զարգացման համար և կիրառելի են առօրյա կյանքում, օրինակ՝ թվային տվյալների վերլուծությունը, կառուցողական ունակությունները, ուսուցման տեխնիկական միջոցների հետ աշխատելու և դրանցից գիտելիք քաղելու կարողությունը և այլն: Գործնական մեթոդների շարքին են պատկանում օբյեկտների ու երևույթների դիտարկումը բնության մեջ, արտադրական և ոչ արտադրական ոլորտի ձեռնարկություններում: Այս մեթոդները նպաստում են աշխարհագրական գիտելիքների կիրառմանը հասարակական կյանքում և աշխատանքի տարբեր ոլորտներում (մթնոլորտային երևույթների կանխատեսում, հեղեղատների առաջացման կանխատեսում, ջրամբարների աղտոտման դեմ պայքարի ուղիների որոնում և այլն): Այս մեթոդները նաև արդիականացնում են դպրոցական աշխարհագրություն առարկան և մատնանշում նրա կիրառական նշանակությունը:

Գործնական աշխատանքներն ուսումնական գործընթացի անբաժանելի մասն են , այն իրականացվում է թե՛ դասի ընթացքում ուսուցչի անմիջական հսկողությամբ, թե՛ ինքնուրույն ձևով՝ ուսուցչի հանձնարարությամբ, բայց միջնորդավորված հսկողությամբ: Աշխարհագրության բոլոր դասընթացների համար գործնական մեթոդը կիրառվում է զանազան վարժություններ և փորձեր կատարելու ժամանակ, որի հիմնական նպատակն է ձևավորել կարողություններ և հմտություններ տեսական գիտելիքները կյանքում նպատակասլաց կիրառելու համար: Աշխարհագրության դասերին հաճախ մոդելներ են պատրաստում հենց իրենք, աշակերտները, նրանք գծում են տեղանքի պլան, կատարում են դիտարկումներ և ստացված տվյալների հիման վրա կառուցում են հատակագիծ , գրաֆիկներ ու դիագրամներ, թվային տվյալներով կատարում են հաշվարկներ (օրինակ՝ գետի հոսքի արագություն, անկում, ծախս և այլն):

Գործնական մեթոդների շրջանակներում ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում, առաջատար է աշակերտի դերը: Գործնական մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործունեության համակարգված եղանակն է, որն իրականացվում է սովորողի ինքնուրույն ակտիվ գործողության միջոցով:

Այս մեթոդները նաև արդիականացնում են դպրոցական աշխարհագրություն առարկան և մատնանշում նրա կիրառական նշանակությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է

- ներկայացնել գործնական աշխատանքի ձևերն ու մեթոդները
- նպաստել սովորողների գործնական և ինքնուրույն աշխատանքների կատարմանը
- նպաստել ինքնուրույն եզրահանգումներ կատարելու կարողությունների ձևավորմանը
- զարգացնել սեփական կարծիք արտահայտելու կարողությունները

Մինչ հետազոտությունը սկսելը իմ առջև դրել եմ մի շարք խնդիրներ՝

- նպաստել սովորողների մոտ հետաքրքրասիրության բարձրացմանը, սովորողների ճանաչողական գործունեության զարգացմանը
- զարգացնել սովորողների վերլուծական մտածողությունը
- ներկայացնել պատճառահետևանքային կապեր
- կարողանալ առաջադրել նոր գաղափարներ:

## **Գործնական աշխատանքները որպես ուսուցման կազմակերպման ձև**

Գործնական մեթոդների իրացման հարցում մեծ դեր ունեն գործնական աշխատանքները, որոնք կատարվում են դասարանում, տեղանքում , արտադրական և ոչ արտադրական ոլորտի ձեռնարկություններում:

**Ուսուցողական գործնական** աշխատանքները կատարվում են ուսուցչի ղեկավարությամբ: Ուսուցիչը բացատրում է գործողությունների հերթականությունը, ցույց է տալիս կատարման օրինակը և հանձնարարում առաջադրանքը, որը ենթադրում է գործողության վերարտադրումն ու մտապահումը, այսինքն ուղղված է գործողության եղանակի յուրացմանն ու կարողության ձևավորմանը (օրինակ՝ կետի աշխարհագրական կոորդինատների որոշումը):

**Վարժեցնող գործնական** աշխատանքները ուղղված են կարողության ամրապնդմանն ու կատարելագործմանը, ինչը կհանգեցնի հմտության ձևավորմանը, այսինքն գործողության ավտոմատացմանը (օրինակ՝ ինքնուրույն ընտրել Եվրասիա մայրցամաքից երեք տեղանուն և որոշել դրանց աշխարհագրական կոորդինատները, որից հետո կրկնել նույն առաջադրանքը մյուս մայրցամաքների հետ): Այսինքն ուսուցիչն առաջադրում է կետի աշխարհագրական կոորդինատների որոշմանն ուղղված տարատեսակ աշխատանքներ, որոնք պահանջում են յուրացված կարողության բազմակի կրկնություն և հանգեցնում հմտության ձևավորման:

**Ամփոփիչ գործնական** աշխատանքները ուղղված են կարողությունների և հմտությունների յուրացման որակի ստուգմանն ու դրանց կիրառմանը նոր պայմաններում :

Գործնական մեթոդների կիրառումը արդյունավետ է միայն այն դեպքում, երբ սովորողները տիրապետում են ուսումնական աշխատանքի այնպիսի հնարներին, որոնք ընկած են աշխարհագրական կարողությունների և հմտությունների հիմքում: Գիտելիքի աղբյուրից տեղեկություն կորզելու համար , պետք է

հասկանալ նրանում պարունակվող աշխարհագրական տեղեկության առանձնահատկությունը: Օրինակ քարտեզով աշխատել կարողանալու համար , պետք է սկզբում կարողանալ այն բնութագրել, որից հետո նոր աշակերտները կկարողանան դրանից կորզել տեղեկություններ: Այսպիսով, քարտեզը սկզբում հանդիսանում է ուսումնասիրման առարկա, հետո նոր գիտելիքի ստացման աղբյուր:

### **Գործնական աշխատանքի ձևերն ու տեսակները**

Դպրոցում դասավանդվող աշխարհագրություն առարկայից կատարվող գործնական աշխատանքները լինում են երեք տեսակի և կրում են տեղագրական բնույթ.

ա. աշխատանք տեղագրական և աշխարհագրական քարտեզներով

բ. բնության դիտումներ

գ. գծագրերի, դիագրամների, սխեմաների, աղյուսակների կազմում, պրոֆիլների, մոդելների, հավաքածուների, հերբարիումների, գործիքների պատրաստում և դրանց օգտագործում

Գործնական աշխատանքների վերը թվարկված տեսակները ունեն խիստ բազմազան թեմատիկա: Այդ թեմաները կան համարյա աշխարհագրական բոլոր դասընթացներում: Օրինակ՝ ցածր դասարանների դասընթացներում ընդգրկված նյութերը հիմնականում պարունակում են բնության դիտումներին վերաբերող աշխատանքներ:

1. Կողմնորոշում տեղանքում- կողմնացույցով , գնումնով(արևացույցով), քնեռային աստղով, Արեգակով, լուսնով, տեղական առարկաների հատկանիշներով, քարտեզներով և այլն:
2. Տարածությունների, մակերեսների և անկյունների չափում- մետրով, չափերիզով, հողաչափական կարկինով, քայլերի միջին երկարությունով, հեռաչափով, աչքաչափով, ժամանակի

տնողությամբ, մակերեսները՝ պալետկայով, անկյունները՝ ազիմուտալ սեղանով, կողմնացույցով և փոխադրիչով:

3. Տեղանքում հանույթի կատարում:
4. Տեղանքի պրոֆիլի կազմում:
5. Բլրի բարձրության որոշում:
6. Լանջերի թեքության որոշում:
7. Տեղում աշխարհագրական լայնության որոշում-սկաֆիսի, ցուցիչի միջոցով:
8. Գրունտային ջրերի խորությունը, հողի շերտի հզորությունը, գետի կենդանի կտրվածքի, արագության և տեղափոխվող ջրի քանակության որոշելը:
9. Օդերևութաբանական դիտումների կատարումը, գործիքներից (ջերմաչափից, խոնավաչափից, ձյունաչափից, ֆյուզերից ) օգտվելը, եղանակի դիտումների հիման վրա եղանակացույցերի, գրաֆիկների, աղյուսակների կազմում:
10. Ֆենոլոգիական դիտումների անցկացում:
11. Բնակչության բնական աճի, խտության, քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցության որոշում, ազգային, սեռային, տարիքային, կրոնակաբն, լեզվական, կրթական կառուցվածքի վերաբերյալ աշխատանքների կատարում:

Բարձր դասարաններում գործնական աշխատանքների թեմատիկան աստիճանաբար բարդանում է և վերաբերում է տնտեսական և սոցիալական հարցերին: Օրինակ.

1. Արդյունաբերական ձեռնարկությունների տեղաբաշխման ,արտադրատեսակների թողարկման քանակի, հզորության վերաբերյալ տվյալների մշակում:
2. Գյուղատնտեսության, նրա ճյուղային կառուցվածքի , բերքատվության և մթերատվության , համախառն բերքի և մթերքի քանակներին վերաբերող նյութերի հետ աշխատանք:

3. Բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտների, արդյունաբերական ապրանքների և գյուղատնտեսական մթերքների վերաբերյալ հաշվարկների կատարում:
4. Տրանսպորտային միջոցներով բեռնաշրջանառության և ուղևորափոխադրության հաշվարկների կատարում:
5. Առանձին վերցրած ձեռնարկությունների բնութագրերի կազմում:  
Յուրաքանչյուր աշխարհագրական օբյեկտ իր որոշակի տեղն է զբաղեցնում երկրում և բնութագրվում է այլ աշխարհագրական օբյեկտների նկատմամբ իր ունեցած յուրահատուկ աշխարհագրական դիրքով: Որպեսզի կարողանան որոշել օբյեկտի աշխարհագրական դիրքը, աշակերտները պիտի կարողանան կողմնորոշվել քարտեզով, այսինքն պետք է հիշեն բավականին աշխարհագրական օբյեկտներ և նրանց համեմատությամբ որոշեն օբյեկտի աշխարհագրական դիրքը քարտեզի վրա: Աշխարհագրական գիտելիքների ամրապնդման համար միակ և կարևորագույն ուղին, մշտապես վարժությունների կատարումն է՝ քարտեզը կարդալ և նրա մանրամասները ուրվագծային քարտեզի վրա տեղափոխել: Աշակերտները աշխարհագրական օբյեկտները մեկը մյուսից տարբերելու համար առաջին հերթին պետք է տարբերեն դրանց առանձնահատկությունները, նմանություններն ու տարբերությունները, կապերը, կապերի պատճառները, կախվածությունը և այլն: Իսկ դա նշանակում է, որ ինքնուրույն գործնական աշխատանք կատարելու կարևոր պայման է աշխարհագրական հասկացությունների համակարգին տիրապետելը, նոր միայն ինքնուրույնաբար յուրացնելը եզակի հասկացությունները:

Գիտելիքներ յուրացնելու և կիրառելու ,կարողություններ և հմտություններ ձևավորելու գործընթացում լայնորեն օգտագործվում են բանավոր և գրավոր վարժությունները: Նպատակահարմար են բանավոր վարժություններն այնքանով, որ ժամանակի խնայողություն է կատարվում, և աշխատանքները կատարվում են արագ: Աշակերտներին ընտելացնում են աշխատել՝ ուշադրությունը լարելով: Եթե



վարժություններն անց են կացվում դասարանում, աշխատանքի միասնական տեմպը կարող է խանգարել աշակերտներին, այդ պատճառով ուսուցիչները պետք է խուսափեն մեծածավալ առաջադրանքներից: Հակառակ բանավոր վարժությունների՝ գրավոր աշխատանքները հնարավորություն են տալիս ավելի բարդ առաջադրանքներ կատարել, կատարածը մի քանի անգամ ստուգել:

Գրառածի տեսողական պատկերը նպաստում է գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդմանը: Սակայն գրավոր աշխատանքները ժամանակի ավելի մեծ ծախս են պահանջում:

Սովորողների գործնական աշխատանքների կատարման ժամանակ տարբերում ենք բանավոր և գրավոր վարժությունների երեք տեսակ.

1. Վարժություններ, որոնցում վերարտադրվում է յուրացված նյութը:
2. Ստացած գիտելիքները նոր պայմաններում կիրառելու աշխատանքներ:
3. Ստեղծագործական աշխատանքներ:

Աշխարհագրության դասավանդման գործընթացում գործնական աշխատանքների կատարումն իրենց բնույթով հարում են գրաֆիկական աշխատանքներին: Աշխարհագրության ուսուցիչների կողմից կիրառվող գրաֆիկական աշխատանքներն են.

#### **Ուրվանկարներ**

**Քարտեզների պատրաստում** – այսպիսի աշխատանքը նպաստում է աշխարհագրական նյութի մտապահելուն: Ուրվագծային քարտեզների վրա սովորողները գրանցում են ուսումնասիրված տվյալները, դրա հետ միասին աշակերտները ինքնուրույն պատրաստում են ոչ բարդ քարտեզներ:

**Գրաֆիկների և սխեմաների, աղյուսակների** պատրաստումը լայնորեն օգտագործվում է աշխարհագրության դասերին: Այդպիսի աշխատանքներ կատարվում են ինքնուրույն դիտումների, վիճակագրական տվյալների օգտագործման միջոցով: Սեզոնային և ֆենոլոգիական դիտումների, եղանակացույցի տվյալների հիման վրա կատարվող գործնական աշխատանքների ժամանակ աշակերտները կազմում են գրաֆիկներ,

սխեմաներ, աղյուսակներ, որոնք հետագայում օգտագործվում են աշխարհագրության տարբեր դասընթացների համապատասխան թեմաներն անցնելու ժամանակ:

**Ալբոմների, ստենդների, պլակատների պատրաստում:** Այսպիսի աշխատանքներ աշխարհագրությունից կատարվում են բոլոր դասընթացներից, բոլոր դասարաններում: Ալբոմների և ստենդների պատրաստումը պետք է կատարել բարձր դասարաններում, որովհետև դրանք պահանջում են բազմաբովանդակ և բազմաբնույթ նյութերի հավաքում: Նյութեր, որոնց մեծ մասը պետք է վերցնել թերթերից, ամսագրերից, դրոշմանիշներից, գովազդներից: Այդպիսի նյութերը կարող են վերաբերել առանձին վերցրած երկրին (Ֆրանսիայի ալբոմ, ԱՄՆ-ի ալբոմ):

Աշխարհագրության առաջավոր ուսուցիչները նախօրոք պլանավորում են այդ աշխատանքները, կազմում են աշակերտների ցուցակները, նշում են աշխատանքների կատարման ժամկետները: Նմանատիպ աշխատանքների միջոցով ամրապնդվում են աշակերտների գիտելիքները համապատասխան երկրի ու տարածաշրջանի մասին:

Աշխարհագրական գիտելիքների յուրացման, մտապահման ու կիրառման գործընթացում կարող են կիրառվել նաև տարբեր խաղեր: Սովորողները կարող են լուծել հանելուկներ, մրցել առաջադրանքի կատարման արագությամբ (աշխարհագրական օբյեկտների անունների թվարկման քանակով): Փորձը ցույց է տվել, որ 5-6-րդ դասարաններում դրանք հետաքրքրություն են առաջացնում ուսման նկատմամբ, ճանաչողական խնդիրների լուծման նկատմամբ, ստեղծում են լարված աշխատանքի մեջ անհրաժեշտ հանգիստ:

Միտքը, կամքը, զգացմունքները, հիշողությունը դաստիարակող ու զարգացնող օգտակար խաղերի մշակումը կարևոր է ու հեռանկարային: Այդ պատճառով աշխարհագրություն դասավանդող ուսուցիչները դրան լուրջ տեղ պետք է տան և մեծ ուշադրություն դարձնեն: Ինքնուրույն գործնական

աշխատանքներից են նաև աշխարհագրական բնույթի խնդիրների, վարժությունների, խաչբառների կազմումը և լուծումը, հարց ու պատասխանները, որոնք աշխարհագրական գիտելիքների հարստացման, խորացման և ամրապնդման արդյունավետ միջոցներ են: Խնդիրները, վարժությունները, խաչբառերը, հարց ու պատասխանները կազմվում և լուծվում են՝ ելնելով կոնկրետ թեմայի բովանդակությունից և անհրաժեշտությունից, բայց դրանք պարտադիր ու մշտական համարվել չեն կարող: Աշխարհագրական խնդիրները, վարժությունները և այժմ բավական շատ տարածված խաչբառները իրենց բովանդակությամբ կարող են լինել զուտ աշխարհագրական, մասամբ էլ՝ մաթեմատիկական հիմքով: Այս աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը պայմանավորված է ուսուցչի աշխատանքով. Ինչպես ասում են , ով փնտրում է , նա գտնում է : Ուսուցիչն անընդհատ պետք է փնտրի, գտնի, ինքը կազմի, ավելին՝ սովորեցնի աշակերտներին, որպեսզի նրանք էլ կազմեն աշխարհագրական խնդիրներ, վարժություններ, խաչբառներ:

Եթե գրեթե անսահմանափակ է ինքնուրույն աշխատանքների մեթոդի կիրառման համար գործնական աշխատանքները աշխարհագրության բոլոր դասընթացներում, ապա նույնը չի կարելի ասել փորձերի վերաբերյալ եղած թեմաների նկատմամբ՝ դրանք բավականին սահմանափակ են: Աշխարհագրությունից անցկացվող փորձերը բնությունում տեղի ունեցող երևույթների կրկնօրինակումն են , միայն այն տարբերությամբ , որ դրանք բնության մեջ ընթանում են շատ դանդաղ, իսկ փորձերի ժամանակ՝ շատ արագ, և աշակերտների համար դառնում է դյուրըմբռնելի, որի շնորհիվ աշակերտները բնության մեջ տեղի ունեցող շատ երևույթներ սկսում են հասկանալ:

Գործնական մեթոդների իրացման հարցում մեծ դեր ունեն փորձերը, գործնական աշխատանքները, որոնք կատարվում են դասարանում, տեղանքում, արտադրական և ոչ արտադրական ոլորտի ձեռնարկություններում:

Փորձը որպես կարևոր միջոց՝ դասավանդման մեջ, ուսումնասիրվել է հետազոտողների և մանկավարժների կողմից: Այս միջոցով ավելի արդյունավետ է դառնում նյութի ուսումնասիրությունը: Երբ սովորողները փորձի միջոցով բացահայտում են բնության մեջ տեղի ունեցող երևույթները, կարողանում են ինքնուրույն վերլուծություններ անել, համեմատականներ տանել կամ եզրահանգումներ կատարել:

Ներկայումս փորձը որպես հետազոտական, ուսուցման գործնական մեթոդ պետք է դիտարկել որպես ճանաչողության հիմնական ուղիներից մեկը, որն առավելագույնս համապատասխանում է երեխայի բնույթին և դասավանդման ժամանակակից խնդիրներին: Այն հիմնված է սեփական հետազոտական որոնումների վրա, այլ ոչ թե ուսուցչի կողմից ներկայացված պատրաստի գիտելիքների յուրացման վրա: Ուսուցչի համար ճանաչողական գործունեության զարգացման ինտենսիվ ուղին ոչ թե գիտելիքների սովորական փոխանցման գործընթացն է, այլ երեխաներին սովորեցնել գիտակցաբար և ստեղծագործաբար կառավարել ճանաչողական

գործընթացի բաղադրիչները՝ հետաքրքրասիրությունը, գիտելիքներ ձեռք բերելու կարողությունը (К. Т., Борисовна, 1999): Փորձի օգտագործումը հանդիսանում է արդյունավետ միջոց հատկապես ճանաչողության ձևավորման համար: Փորձարկումներում օգտագործվում է մտավոր գործունեության հիմնական մեթոդների համակարգը:

Դրանք են.

- գլխավորի դուրս բերումը
- վերլուծություն և սինթեզ համեմատություն
- կոնկրետացում
- հասկացության սահմանում
- համակարգում
- ապացուցում

- փորձի արդյունքների բացատրություն:

Փորձը ուսումնական գործընթացի այլ գործնական մեթոդների հետ մեկտեղ ապահովում է գիտելիքների էմպիրիկ մակարդակ, զարգացնում է սովորողների մոտ ավելի ակտիվ մտածողություն:

Փորձը դիտարկումից տարբերվում է ուսումնասիրվող օբյեկտի հետ ակտիվ փոխազդեցությամբ, երբ հնարավոր չէ որևէ առարկա կամ երևույթ ուսումնասիրել նորմալ պայմաններում, բայց պահանջում է հատուկ պայմանների արհեստական ստեղծում, կամ այն դեպքերում, երբ ինչ-որ արհեստական տարր ներմուծվում է բնական պրոցեսի մեջ:

Փորձը կարող է օգտագործվել դասի տարբեր փուլերում: Նոր նյութ ուսումնասիրելիս այն հանդես է գալիս որպես գիտելիքի հիմնական աղբյուր: Ցույց է տալիս կապը տեսության և պրակտիկայի միջև: Հարցեր տալու ժամանակ թույլ է տալիս որոշել սովորած նյութի յուրացման աստիճանը: Որոշ դեպքերում այն կարող է օգտագործվել հարցումից դասի թեմային անցնելու համար՝ բացահայտելու սովորողների տեսակետները ուսումնասիրված հարցի վերաբերյալ:

Ըստ Դմիտրիևնայի փորձը ակտիվացնում է սովորողների ճանաչողական գործունեությունը, եթե՝

- զուգորդվում է խնդրահարույց իրավիճակների և հարցերի հետ, որոնք երեխաներին մտքերով տանում են դեպի փորձը,
- արտացոլում է իրական իրավիճակներ,
- ներառված է նոր նյութի մեջ,
- անցկացվում է երեխաներին ստեղծագործական առաջադրանքներով:

(Т. Т. Дмитриевна, 2015г. էջ 6):

Այսպիսով, փորձերը օգնում են ավելի լավ հասկանալ բնության մեջ տեղի ունեցող երևույթները, պարզաբանել այդ երևույթների պատճառահետևանքային կապերը: Փորձերը հնարավորություն են տալիս երեխաներին մատչելի ձևով ծանոթացնել բնության օրենքներին:

Փորձերը ոչ միայն գիտելիքի փոխանցման միջոց են, այլև զարգացնում են աշակերտների դիտողականության և մտածողության հմտությունները Դպրոցական աշխարհագրությունից ամենատարածված և անցկացվող փորձերից են.

1. Ջրի ներծծման արագության որոշելը տարբեր ապարների միջոցով, ջրաթափանց և ջրակայուն շերտերի որոշելը:
2. Գրունտի լուծելիության արագության կախվածությունը ջրի հոսքի թեքության աստիճանից:
3. Ջրվեժի, հրաբուխի առաջացման ցուցադրումը:
4. Օդի շարժումը տաքանալիս:
5. Օդի ճնշումը և կշիռը որոշելը:
6. Ջրի կաթիլների առկայությունը մթնոլորտում (սառը առարկայի վրա ջրի կաթիլների առաջացումը տաք միջավայրում):
7. Ապարների քայքայման ընթացքը ջերմաստիճանի տատանման հետևանքով:
8. Եզրային ճնշման շնորհիվ ծալքավորման առաջացումը:

## Եզրակացություն

Դպրոցական աշխարհագրության բովանդակության արդիականացման պայմաններում գործնական մեթոդների դերն ավելանում է, դրանք նպաստում են հայրենագիտական գիտելիքների արդյունավետ ձեռքբերմանը և նախապատրաստում սովորողներին ինքնուրույն կյանքին:

Աշխատանքը կատարելով հանգել եմ հետևյալ եզրակացությունների.

- Համաաշխարհայնացման արդի փուլում խիստ բազմազան ու անչափ հասանելի են դարձել տեղեկատվության, գիտելիքի ստացման աղբյուրները, որի պատճառով հանրակրթության նկատմամբ հասարակական վերաբերմունքը կտրուկ փոխվել է: Այդ փոփոխությունների հիմնական շեշտը դրված է ուսուցման մեթոդների անընդհատ կատարելագործման վրա:

- Հանրակրթությունում ուսուցման մեթոդների կատարելագործման համատեքստում առանձնանում է աշխարհագրության ուսուցման մեթոդները, քանի որ հենց աշխարհագրությունն է ապահավում աշակերտների մոտ աշխարհայացքային դաստիարակությունն ու կրթությունը:

- Ժամանակակից դպրոցում աշխարհագրության ուսուցման մեթոդների մեջ խիստ բարձրացել է տեսական-վերարցակման մեթոդների մասնաբաժինը: Հետևաբար պետք է լուրջ աշխատանք տարվի էմպիրիկ մեթոդների ներգրավման ուղղությամբ:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Մինասյան Ա., Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա, Երևան, 2013,
2. Մինասյան Ա., Աշխարհագրության ուսուցման մեթոդներն ու միջոցները, Երևան, 2011,
3. Սարգսյան Խ. Բ., Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2002,
4. Т. Т. Дмитриевна, Теория и методика обучения географии, 2015г
5. Петрова Е., Теория и методика обучения географии, Томск